

Հավելված

Հաստատված է
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2004 թվականի օգոստոսի 9-ի
N 97-Ն որոշմամբ

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍԱԿԱԳՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ

Սույն կարգով կարգավորվում է ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող անձանց գործունեության սակագների սահմանման ու վերանայման գործընթացը:

1. ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն կարգում օգտագործված հիմնական հասկացությունները սահմանվում են. հայտ (հայտի փաթեթ)՝ սույն կարգի համաձայն սակագնի սահմանման կամ վերանայման համար Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվող փաստաթղթերի փաթեթ, հայտատու՝ սակագների սահմանման կամ վերանայման հայտ ներկայացնող ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող անձ:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1 Սակագների սահմանման ու վերանայման առնչությամբ հայտատուի կողմից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ձեւերը եւ ցանկը (հայտի փաթեթը) սահմանում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով):

2.2 Սահմանված սակագինը կարող է վերանայվել ինչպես ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող անձի կողմից ներկայացված հայտի հիման վրա, այնպես էլ հանձնաժողովի նախաձեռնությամբ:

2.3 Սահմանված սակագներն ուժի մեջ են մտնում որոշումն ընդունելուց 30 օր հետո:

2.4 Սակագների գործողության ժամկետը 1 տարուց պակաս չի կարող լինել:

2.5 Հայտատուն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, պատասխանատվություն է կրում հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաստիության համար:

2.6 Հայտատուի կողմից հանձնաժողով ներկայացվող բոլոր փաստաթղթերը պետք է վավերացված լինեն ընկերության կնիքով եւ լիազորված անձի ստորագրությամբ:

3. ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ԶՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

3.1 Սակագների սահմանման ու վերանայման համար հայտատուն համապատասխան հաշվարկներով եւ հիմնավորումներով հայտ է ներկայացնում հանձնաժողով՝ երկու օրինակից, համաձայն սույն կարգի N 1 հավելվածով սահմանված փաստաթղթերի ցանկի: N 4 եւ N 5 հավելվածներով պահանջվող տեղեկատվությունները ներկայացվում են նաեւ էլեկտրոնային տարբերակով:

3.2 Հայտը հանձնաժողովում մուտքագրվելուց հետո հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումը ստուգում է հայտի ամբողջականությունը եւ նրանում ընդգրկված փաստաթղթերի ձեւակերպման ճշտությունը:

3.3 Հանձնաժողովը հայտի ստուգման արդյունքների մասին գրավոր տեղեկացնում է հայտատուին՝ հայտը հանձնաժողովում մուտքագրվելու օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում:

3.4 Հայտը չի ընդունվում ուսումնասիրության, եթե՝

ա) նրանում ընդգրկված փաստաթղթերը չեն համապատասխանում հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերով եւ սույն կարգով սահմանված պահանջներին:

բ) ներկայացված փաստաթղթերում եւ տեղեկատվություններում առկա են անճշտություններ եւ անհամապատասխանություններ:

3.5 Հայտի ստուգման բացասական արդյունքի դեպքում այն հայտատուին չի վերադարձվում եւ սահմանված կարգով պահպանվում է հանձնաժողովում:

3.6 Հայտի ստուգման բացասական արդյունքի դեպքում հայտատուն, հայտնաբերված թերությունները վերացնելուց հետո, կարող է նոր հայտով դիմել հանձնաժողով: Այդ դեպքում հայտատուն իրավունք ունի հղում կատարել նախկին հայտով ներկայացված փաստաթղթերին, եթե դրանցում ներկայացված տվյալները չեն փոփոխվել նոր հայտի ներկայացման պահին:

3.7 Հայտի ստուգման դրական արդյունքի դեպքում հանձնաժողովը հայտն ընդունում է ուսումնասիրության: Հանձնաժողովը սակագինը սահմանում, վերանայում (վերահաստատում կամ փոփոխում) եւ համապատասխան որոշում է կայացնում հայտատուին հայտի փաթեթի ստուգման արդյունքների մասին գրավոր տեղեկացնելու օրվանից հետո 90 օրվա ընթացքում:

3.8 Հանձնաժողովն իրավունք ունի հայտատուից պահանջել նաեւ գործունեությանը վերաբերող լրացուցիչ տեղեկատվություն եւ փաստաթղթեր, որոնց ներկայացման անհրաժեշտության մասին գրավոր տեղեկացնում է հայտատուին՝ մշտնապես ներկայացման ողջամիտ ժամկետ: Եթե խախտվում են լրացուցիչ տեղեկատվության եւ փաստաթղթերի ներկայացման համար հանձնաժողովի գրությունում մշտնապես ներկայացված ժամկետները, ապա ուշացման ժամանակը չի ներառվում սույն կարգի 3:7 կետում սահմանված ժամկետում:

3.9 Սակագների սահմանման ու վերանայման վերաբերյալ հանձնաժողովի որոշման պատճենն ուղարկվում է հայտատուին որոշումն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

4.1 Հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ սույն կարգի համաձայն կարող է վերանայել գործող սակագինը եւ սահմանել նոր սակագին՝ ելնելով ջրային համակարգի օգտագործման թույլտվությունն ունեցող անձի տնտեսական գործունեության արդյունքներից, ներդրումային ծրագրերի եւ սպառողներին մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ ներկայացված պահանջների կատարումից:

4.2 Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ սակագների վերանայման գործընթաց ձեռնարկելու դեպքում՝

ա) նախապես այդ մասին գրավոր տեղեկացնում է ջրային համակարգի օգտագործման թույլտվությունն ունեցող անձին.

բ) ջրային համակարգի օգտագործման թույլտվությունն ունեցող անձից կարող է պահանջել գործունեությանը վերաբերող անհրաժեշտ տեղեկատվություն:

Հավելված N 1
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2004 թվականի օգոստոսի 9-ի
N 97-Ն որոշմամբ
հաստատված կարգի

ՑԱՆԿ

ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ ԶՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

N	Հայտ ներկայացնող ընկերության անվանումը Ներկայացվող փաստաթղթերի անվանումը	Խմելու ջրի մատակարարում եւ ջրահեռացում իրականացնող ընկերու- թյուններ	Ոռոգում իրականացնող ընկերու- թյուններ
1	2	3	4
1	Սակագների սահմանման կամ վերանայման համար ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող անձանց կողմից ներկայացվող դիմումի ձեւը (հավելված N 2)	.	.
2	Հայաստանի Հանրապետության երեք ամեամեծ տպաքանակ ունեցող թերթերում սակագների սահմանման կամ վերանայման վերաբերյալ ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող անձանց մտադրության մասին հայտարարության ձեւը (հավելված N 3)	.	.
3	Խմելու ջրի մատակարարում եւ ջրահեռացում իրականացնող ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագների հաշվարկ (հավելված N 4, ձեւ 4-1)	.	---
4	Ոռոգում իրականացնող ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագների հաշվարկ (հավելված N 4, ձեւ 4-2)	---	.
5	Տեղեկատվություն խմելու ջրի մատակարարում եւ ջրահեռացում իրականացնող ընկերության կանխատեսվող տարվա ջրային հաշվեկշռի վերաբերյալ (հավելված N 5, ձեւ 5-1)	.	---
6	Տեղեկատվություն խմելու ջրի մատակարարում եւ ջրահեռացում իրականացնող ընկերության մասնաճյուղերի կանխատեսվող տարվա ջրային հաշվեկշռի վերաբերյալ (հավելված N 5, ձեւ 5-2)	.	---
7	Տեղեկատվություն խմելու ջրի մատակարարում եւ ջրահեռացում իրականացնող ընկերությունում շահագործվող պոմպակայանների վերաբերյալ (հավելված N 5, ձեւ 5-3)	.	---
8	Տեղեկատվություն ոռոգում իրականացնող ընկերության կանխատեսվող տարվա ջրային հաշվեկշռի վերաբերյալ (հավելված N 5, ձեւ 5-4)	---	.

9	Տեղեկատվություն ոռոգումն իրականացնող ընկերության մասնաճյուղի պոնպակայանների շահագործման ցուցանիշների վերաբերյալ (հավելված N 5, ձեւ 5-5)	---	.
10	Տեղեկատվություն ոռոգումն իրականացնող ընկերությունում շահագործվող ջրամբարների վերաբերյալ (հավելված N 5, ձեւ 5-6)	---	.

. փաստաթուղթը ներկայացվում է
--- փաստաթուղթը չի ներկայացվում

Հավելված N 2
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2004 թվականի օգոստոսի 9-ի
N 97-Ն որոշմամբ
հաստատված կարգի

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ սահմանել (վերանայել)

.....
(հայտ ներկայացնող ընկերության անվանումը)
.....
(մարզը, քաղաքը, բնակավայրը)
..... սակագինը (դրույթը)
(խմելու ջրի վաճառքի, ջրահեռացման ծառայության
մատուցման, ոռոգման ջրի վաճառքի)

Հավաստում եմ, որ իմ կողմից ներկայացված հայտը պարունակում է ստույգ տեղեկատվություն եւ անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթեր ու հաշվարկներ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված կարգի:

Դիմումին կցվում եմ՝

(փաստաթղթերի անվանումը, օրինակների եւ էջերի քանակը)
1.
2.
3.
4.
5.
.....
(հայտ ներկայացնող ընկերության հասցեն)

Հեռախոս Ֆաքս Էլեկտր. փոստ
.....
(ընկերության կոդը, պետական ռեգիստրում գրանցման համարը)
.....
(բանկային տվյալները)
.....
(լիազորված անձի պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)
.....
(ամսաթիվը, հայտ ներկայացնող ընկերության կնիքը)

Հավելված N 3
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2004 թվականի օգոստոսի 9-ի
N 97-Ն որոշմամբ
հաստատված կարգի

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀՄՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

.....
(հայտ ներկայացնող ընկերության անվանումը)

դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով

.....
(մարզը, քաղաքը, բնակավայրը)

.....
(մատուցվող ծառայության տեսակը)

..... սակագնի (դրույթի)
(խմելու ջրի վաճառքի, ջրահեռացման ծառայության
մատուցման, ոռոգման ջրի վաճառքի)

սահմանման (վերանայման) հայտով:

Գործող սակագինը`

Առաջարկվող սակագինը`

.....
(հայտատուի գտնվելու վայրը, հեռախոսը, ֆաքսը)

Հավելված N 4
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2004 թվականի օգոստոսի 9-ի
N 97-Ն որոշմամբ
հաստատված կարգի

Ձեւ 4-1

.....
/ընկերության անվանումը/

ԽՍԵԼՈՒ ՋՐԻ ՄՏՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ՄՏՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԱԳԵՐԻ ՀԱԾՎԱՐԿ

Կանխատեսվող տարի
200... թ. -ից 200... թ. -ը
(նշել ժամանակաշրջանը)

.....
| | | Զափի | Ընդամենը |

		միավոր	
1	2	3	4
1	Ջրաղբյուրներից վերցված եւ ցանցին տրված ջրի քանակը	մլն խմ	
1.1	ինքնահոս եղանակով	մլն խմ	
1.2	մեխանիկական եղանակով	մլն խմ	
2	Կորուստները		
2.1	քնեղեն արտահայտությամբ	մլն խմ	
2.2	տոկոսային արտահայտությամբ ((տ.1)-ի նկատմամբ)	%	
3	Սպառողին տրված ջրաքանակը, այդ թվում`	մլն խմ	
3.1	բնակչություն	մլն խմ	
3.2	բյուջետային եւ բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններ	մլն խմ	
3.3	այլ սպառողներ	մլն խմ	
4	Ջրահեռացում, այդ թվում	մլն խմ	
4.1	բնակչություն	մլն խմ	
4.2	բյուջետային եւ բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններ	մլն խմ	
4.3	այլ սպառողներ	մլն խմ	
5	Խմելու ջրի մատակարարում եւ ջրահեռացում իրականացնելու համար անհրաժեշտ շահագործման եւ պահպանման ծախսեր, ընդամենը (տ.5.0.1+տ.5.0.2) այդ թվում`	մլն դրամ	
5.0.1	ջրամատակարարման համակարգի համար (տ.5.1.1+տ.5.2.1+տ.5.3.1+տ.5.4.1+տ.5.5.1+ տ.5.6.1+տ.5.7.1+տ.5.8.1+տ.5.9.1)	"-"	
5.0.2	ջրահեռացման համակարգի համար (տ.5.1.2+տ.5.2.2+տ.5.3.2+տ.5.4.2+տ.5.5.2+ տ.5.6.2+տ.5.7.2+տ.5.8.2+տ.5.9.2)	մլն դրամ	
5.1	Նյութական ծախսեր	մլն դրամ	
5.1.1	ջրամատակարարման համակարգի համար	"-"	
5.1.2	ջրահեռացման համակարգի համար	"-"	
5.2	Նորոգման ծախսեր	մլն դրամ	

5.2.1	ջրամատակարարման համակարգի համար	" - "	
5.2.2	ջրահեռացման համակարգի համար	" - "	
5.3	Հաշվարկներ աշխատակազմի հետ (աշխատավարձ)	մլն դրամ	
5.3.1	ջրամատակարարման համակարգի համար	" - "	
5.3.2	ջրահեռացման համակարգի համար	" - "	
	միջին աշխատավարձ	հազ. դրամ	
	աշխատողների թվաքանակը	մարդ	
5.4	Հատկացումներ սոցիալ. ասպիտակագրության հիմնադրամին	մլն դրամ	
5.4.1	ջրամատակարարման համակարգի համար	" - "	
5.4.2	ջրահեռացման համակարգի համար	" - "	
5.5	Էլեկտրաէներգիայի վճար (տ.5.5.1+տ.5.5.2)	մլն դրամ	
5.5.1	ջրամատակարարման համակարգի համար	" - "	
5.5.2	ջրահեռացման համակարգի համար	" - "	
5.5.3	Ջրաղբյուրներում տեղակայված պոմպերի ծախսած էլեկտրաէներգիա	մլն դրամ	
5.5.4		մլն կՎտժ	
5.5.5	Տնային պոմպերի ծախսած էլեկտրաէներգիա	մլն դրամ	
5.5.6		մլն կՎտժ	
5.5.7	Էլեկտրաէներգիայի այլ սպառում	մլն դրամ	
5.5.8		մլն կՎտժ	
5.6	Այլ ծախսեր	մլն դրամ	
5.6.1	ջրամատակարարման համակարգի համար	" - "	
5.6.2	ջրահեռացման համակարգի համար	" - "	
5.7	Վարկի սպասարկում	մլն դրամ	
5.7.1	ջրամատակարարման համակարգի համար	" - "	
5.7.2	ջրահեռացման համակարգի համար	" - "	
5.8	Բնապահպանական վճար	մլն դրամ	
5.8.1	ջրամատակարարման համակարգի համար	" - "	
5.8.2	ջրահեռացման համակարգի համար	" - "	

5.9	Բնօգտագործման վճար	մլն դրամ	
5.9.1	ջրամատակարարման համակարգի համար	" - "	
5.9.2	ջրահեռացման համակարգի համար	" - "	
6	Մաշվածուխյուն	մլն դրամ	
6.1	ջրամատակարարման համակարգի համար	" - "	
6.2	ջրահեռացման համակարգի համար	" - "	
7	Ծահուլթ	մլն դրամ	
7.1	ջրամատակարարման համակարգի համար	" - "	
7.2	ջրահեռացման համակարգի համար	" - "	
8	Ընդամենը հասուլթ (առանց ԱԱՀ-ի) (տ.8.1+տ.8.2)	մլն դրամ	
8.1	ջրամատակարարման համակարգի համար (տ.5.0.1+տ.6.1+տ.7.1)	" - "	
8.2	ջրահեռացման համակարգի համար (տ.5.0.2+տ.6.2+տ.7.2)	" - "	
9	Ջրամատակարարման սակագին`		
9.1	առանց ԱԱՀ-ի (տ.8.1 : տ.3)	դրամ/լսմ	
9.2	ներառյալ ԱԱՀ-ն (տ.9.1 x 1,2)	դրամ/լսմ	
10	Ջրահեռացման սակագին`		
10.1	առանց ԱԱՀ-ի (տ.8.2 : տ.4)	դրամ/լսմ	
10.2	ներառյալ ԱԱՀ-ն (տ.10.1 x 1,2)	դրամ/լսմ	
11	Ընդամենը սակագին`		
11.1	առանց ԱԱՀ-ի (տ.9.1 : տ.10.1)	դրամ/լսմ	
11.2	ներառյալ ԱԱՀ-ն (տ.11.1 x 1,2)	դրամ/լսմ	

/Լիազորված անձի ստորագրությունը/

/անունը, ազգանունը/

Կ.Տ.

Հավելված N 4
 ՀՀ հանրային ծառայությունները
 կարգավորող հանձնաժողովի
 2004 թվականի օգոստոսի 9-ի
 N 97-Ն որոշմամբ
 հաստատված կարգի

/ընկերության անվանումը/

ՈՈՈԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԱԳՆԵՐԻ ՀԱԾՎԱՐԿ

Կանխատեսվող տարի
 200... թ. -ից 200... թ. -ը
 (նշել ժամանակաշրջանը)

1	2	Չափի միավոր	Ինքնա- հոս եղանա- կով	Մեխանի- կական եղանա- կով	Ընդամենը
1	2	3	4	5	6
1	Ջրադրյուններից վերցված եւ ցանցին տրված ջրի քանակը	մլն խմ			
2	Կորուստները				
2.1	բնեղեն արտահայտությամբ	մլն խմ			
2.2	տոկոսային արտահայտությամբ ((տ.1)–ի նկատմամբ)	%			
3	Սպառողին տրված ջրաքանակը, այդ թվում`	մլն խմ			
3.1	ջրօգտագործողների ընկերություններ եւ ջրօգտագործողների ընկերությունների միություններ	մլն խմ			
3.2	այլ սպառողներ	մլն խմ			
4	Ոռոգման ջրի մատակարարում իրականացնելու համար անհրաժեշտ շահագործման եւ պահպանման ծախսեր, ընդամենը այդ թվում`	մլն դրամ			
4.1	Նյութական ծախսեր	մլն դրամ			
4.2	Նորոգման ծախսեր	մլն դրամ			
4.3	Հաստիքային անձնակազմի աշխատավարձը	մլն դրամ			
4.3.1	միջին աշխատավարձ	հազ. դրամ			
4.3.2	աշխատողների միջին թվաքանակը	մարդ			
4.4	Հատկացումներ սոցիալ.	մլն դրամ			

	ապահովագրության հիմնադրամին				
4.5	Էլեկտրաէներգիայի վճար	մլն դրամ			
4.5.1	ջրաղբյուրներում տեղակայված պոմպերի ծախսած էլեկտրաէներգիա	մլն դրամ			
		մլն կՎտժ			
4.5.2	Էլեկտրաէներգիայի այլ սպառում	մլն դրամ			
		մլն կՎտժ			
4.6	Այլ ծախսեր	մլն դրամ			
4.7	Վարկի սպասարկում	մլն դրամ			
4.8	Ռեսուրսավճար	մլն դրամ			
5	Մաշվածություն	մլն դրամ			
6	Շահույթ	մլն դրամ			
7	Ընդամենը հասույթ (առանց ԱԱՀ-ի) (տ.4+տ.5+տ.6)	մլն դրամ			
8	Սակագին`				
8.1	առանց ԱԱՀ-ի (տ.7 : տ.3)	դրամ/խմ			
8.2	ներառյալ ԱԱՀ-ն (տ.8.1 x 1,2)	դրամ/խմ			

/Լիազորված անձի ստորագրությունը/

/անունը, ազգանունը/

Կ.Տ.

Հավելված N 5
 ՀՀ հանրային ծառայությունները
 կարգավորող հանձնաժողովի
 2004 թվականի օգոստոսի 9-ի
 N 97-Ն որոշմամբ
 հաստատված կարգի

Ձեւ 5-1

/ընկերության անվանումը/

ՏԵՐԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՍԱՏՎԱԲԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ՏԱՐԿԱ ՋՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կանխատեսվող տարի
 200... թ. -ից 200... թ. -ը
 (նշել ժամանակաշրջանը)

N	Սնվող մասնաճյուղ (գյուղեր)	Չափի միավոր	Ընդամենը
1	2	3	4
1	ՀԱՄԱԿԱՐԳ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԱԾ ԶՈՒՐ, ընդամենը այդ թվում`	հազ. խմ	
	ինքնահոս եղանակով	"-"	
	մեխանիկական եղանակով	"-"	
1.1	ջրաղբյուրներից, այդ թվում`	հազ. խմ	
	ինքնահոս եղանակով	"-"	
	մեխանիկական եղանակով	"-"	
1.2	այլ ընկերություններից գնված ջուր, այդ թվում`	հազ. խմ	
1.2.1		"-"	
1.2.2		"-"	
.....		"-"	
2	ԿՈՐՈՒՄՏԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ, ընդամենը	հազ. խմ	
	Նույնը տոկոսային արտահայտությամբ տ.1 նկատմամբ	%	
2.1	այդ թվում` կորուստները (ջրաղբյուր-մասնաճյուղ) ջրատարներում	հազ. խմ	
	Նույնը տոկոսային արտահայտությամբ տ.1 նկատմամբ	%	
2.2	կորուստները մասնաճյուղերում	հազ. խմ	
	Նույնը տոկոսային արտահայտությամբ տ.1 նկատմամբ	%	
3	ԶՐԻ ՄՊԱՌՈՒՄ, ընդամենը (տ.1-տ.2) կամ (տ.3.1+տ.3.2) այդ թվում`	հազ. խմ	
3.1	Ընդամենը մասնաճյուղեր (գյուղեր)	հազ. խմ	
3.2	Խմելու ջրի մատակարարում իրականացնող այլ ընկերություններին վաճառվող ջուր, ընդամենը (տ.3.2.1+տ.3.2.2+.....), այդ թվում`	հազ. խմ	
3.2.1		"-"	
3.2.2		"-"	

3	բյուջետային								
	այլ								
	բնակչություն								
4	բյուջետային								
	այլ								
	բնակչություն								
5	բյուջետային								
	այլ								
	բնակչություն								
6	ԸՆԴԱՄԵՆԸ ՄԱՍՆԱ- ԾՅՈՒՂԵՐ (ԳՅՈՒՂԵՐ)	բնակչություն							
		բյուջետային							
		այլ							

Երեւանի "Ջրմուղ-կոյուղի" փակ բաժնետիրական ընկերությունն իր կողմից սպասարկող բոլոր գյուղերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է գումարային տեսքով:

/Լիազորված անձի ստորագրությունը/

/անունը, ազգանունը/

Կ.Տ.

ԻՐՏԵԿ - շարունակությունը հաջորդ մասում

Հավելված N 5
 ՀՀ հանրային ծառայությունները
 կարգավորող հանձնաժողովի
 2004 թվականի օգոստոսի 9-ի
 N 97-Ն որոշմամբ
 հաստատված կարգի

Ձեւ 5-3

/ընկերության անվանումը/

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՇԵՌԱՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸԱՀԱԳՈՐԾՎՈՂ ՊՈՍՊԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կանխատեսվող տարի

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՌՈԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՏԵՄՎՈՂ ՏԱՐԿԱ
 ԶՐԱՅԻՆ ՀԱԾԿԵԿՇՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կանխատեսվող տարի
 200... թ. -ից 200... թ. -ը
 (նշել ժամանակաշրջանը)

N		Չափի միավոր	Ընդա- մենը	այդ թվում՝ ըստ մասնաճյուղերի			
			
1	2	3	4	5	6	7	8
1	Ընդամենը ջրառ, այդ թվում՝	մլն խմ					
1.1	մեխանիկական եղանակով	-"-					
1.2	ինքնահոս եղանակով	-"-					
2	Ջրի կորուստները, ընդամենը, այդ թվում՝	մլն խմ %					
2.1	մեխանիկական եղանակով մատակարարված ջրի կորուստները	մլն խմ %					
2.2	ինքնահոս եղանակով մատակարարված ջրի կորուստները	մլն խմ %					
3	Ընդամենը ջրտուօրի կետերում մատակարարված ջուր (տ.1-տ.2), այդ թվում՝	մլն խմ					
3.1	մեխանիկական եղանակով	-"-					
3.2	ինքնահոս եղանակով	-"-					
4	Ջրօգտագործողների ընկերությունների միություններին մատակարարվող ոռոգման ջուր	մլն խմ					
5	Ջրօգտագործողների ընկերություններին մատակարարվող ոռոգման ջուր	մլն խմ					
6	Այլ ջրօգտագործողներին մատակարարվող ոռոգման ջուր	մլն խմ					

/Լիազորված անձի ստորագրությունը/

/անունը, ազգանունը/

Կ.Տ.

Հավելված N 5
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2004 թվականի օգոստոսի 9-ի
N 97-Ն որոշմամբ
հաստատված կարգի

Ձեւ 5-5

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՂՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
..... ՍԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՊՈՍՊԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՐԾՍԱՆ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կանխատեսվող տարի
200... թ. -ից 200... թ. -ը
(նշել ժամանակաշրջանը)

N	Պոմպակայանի անվանումը	Մղված ջրի քանակը (հազ. լսմ)	Էլեկտրա- էներգիայի ծախսը (հազ. կՎտժ)	Էլեկտրա- էներգիայի փաստացի տեսակարար ծախսը (կՎտժ/լսմ)	Աշխատած պոմպերի աշխատա- ժամերը (հատ) (ժամ)	Պոմպակայանի դրվածքային հզորության օգտագործման ժամերը	
1	2	3	4	5	6	7	8

Սույն հավելվածի 8-րդ սյունակը լրացվում է համաձայն
 $T_{\text{դր}} = EQ / 3600 \times Q$ հաշվարկի, որտեղ EQ-ն` մղված ջրի քանակն է (հազ. լսմ),
Q-ն` պոմպակայանի պոմպերի գումարային արտադրողականությունն է (լսմ/ժ) :

/Լիազորված անձի ստորագրությունը/

/անունը, ազգանունը/

Կ.Տ.

Հավելված N 5
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2004 թվականի օգոստոսի 9-ի
N 97-Ն որոշմամբ
հաստատված կարգի

Ձեւ 5-6

/ընկերության անվանումը/

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՌՈԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ
ՋՐԱՍԲԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կանխատեսվող տարի
200... թ. -ից 200... թ. -ը
(նշել ժամանակաշրջանը)

N	Ջրամբարների անվանումը (ըստ մասնաճյուղերի)	Վարչատա- րածքային միավորը (մարզը, համայն- քը)	Ընդհանուր ծավալը (մլն խմ)	Օգտակար ծավալը (մլն խմ)	Ջրամբարում ջրի ծավալը հաշվետու ժամանակա- շրջանի սկզբին (մլն խմ)	Ջրամբարում ջրի ծավալը հաշվետու ժամանակա- շրջանի վերջում (մլն խմ)
1	2	3	4	5	6	7
1	----- մասնաճյուղ					
1.1	----- ջրամբար					
1.2	----- ջրամբար					
1.3	----- ջրամբար					
...						
2	----- մասնաճյուղ					
2.1	----- ջրամբար					
2.2	----- ջրամբար					
2.3						
...						
3	----- մասնաճյուղ					
3.1	----- ջրամբար					
3.2	----- ջրամբար					
3.3						
...						
4	----- մասնաճյուղ					
4.1	----- ջրամբար					
4.2	----- ջրամբար					

4.3						

...						

/Լիազորված անձի ստորագրությունը/

/անունը, ազգանունը/

Կ.Տ.